



291 D
181

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Յունուար 18, 1983

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 583

Վիճակիս Հոգեւոր Հովիւներուն

Այս տարի Սրբոց Ղեւոնդեանց Տօնը կը զուգադիպի Փետրուար Յին՝ Երեքշաբթի օր:

Վերջին տարիներուն հաստատուած սովորութեան համաձայն՝ մեր թեմի հոգեւորական եղբայրները կը հրաւիրենք միատեղ խորհրդակցութեան, աղօթքի եւ տօնախմբութեան՝ ֆէրլոն նիւ ճըրգիի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ մէջ:

Հիւրընկալ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Բարի Քհնյ. Մէթճեան կատարած է անհրաժեշտ կարգադրութիւնները:

Հոգեւորականաց խորհրդակցութիւնը տեղի պիտի ունենայ յետ միջօրէի ժամը 3.00ին: Այս առթիւ զեկուցում մը պիտի տայ Տէր Բարի Քհնյ. Մէթճեան, եւ խորհրդակցութեան նիւթ պիտի ըլլան Եկեղեցւոյ Միութեան, Երուսաղէմի եւ հոգեւորականները հետաքրքրող այլ հարցեր:

Հոգեւորականաց խորհրդակցութենէն ետք ընթրիք պիտի սպասարկուի, եւ ապա երեկոյեան ժամը 7.30ին մասնաւոր պաշտամունք պիտի կատարուի Եկեղեցւոյ մէջ: Յաւարտ պաշտամունքի՝ մշակութային սրահին մէջ պիտի գործադրուի յայտագիր մը, մասնակցութեամբ Հայ Դպրոցի աշակերտներուն եւ դաշնակահար Սթիւ Աբրահամեանի:

Կը թելադրենք որ անհրաժեշտ կարգադրութիւնը ընէք ձեր մասնակցութիւնը քրքրելու Հայց. Եկեղեցւոյ հոգեւորականներու յատուկ այս տօնին առթիւ կազմակերպուած հաւաքոյթին:

Հաճեցէք ձեր մասնակցութեան մասին տեղեկացնել Տ. Բարի Քհնյ. Մէթճեանի մինչեւ Փետրուար 3, 1983: Տէր Հօր հասցէն եւ հեռաձայնի թիւ կը գտնէք ստորեւ:

The Reverend Father Patee Metjian
Pastor, St. Leon Armenian Church
12-61 Saddle River Road
Fair Lawn, New Jersey 07410
Tel: 201-791-2862

Սիրոյ ողջունիւ
Pate Metjian
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՍԿՈՍ
Առաջնորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Յունուար 18, 1988

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 583

Վիճակիս Հոգեւոր Հովիւներուն

Այս տարի Սրբոց Ղեւոնդեանց Տօնը կը զուգադիպի Փետրուար 8ին՝ Երեքշաբթի օր:

Վերջին տարիներուն հաստատուած սովորութեան համաձայն՝ մեր թեմի հոգեւորական եղբայրները կը հրաւիրենք միատեղ խորհրդակցութեան, աղօթքի եւ տօնախմբութեան՝ ֆէրլոն նիւ ճըրզիի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ մէջ:

Հիւրընկալ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժշ. Տ. Բարի Քհնյ. Մէթճեան կատարած է անհրաժեշտ կարգադրութիւնները:

Հոգեւորականաց խորհրդակցութիւնը տեղի պիտի ունենայ յետ միջօրէի ժամը 3.00ին: Այս առթիւ զեկուցում մը պիտի տայ Տէր Բարի Քհնյ. Մէթճեան, եւ խորհրդակցութեան նիւթ պիտի ըլլան Եկեղեցւոյ Միութեան, Երուսաղէմի եւ հոգեւորականները հետաքրքրող այլ հարցեր:

Հոգեւորականաց խորհրդակցութենէն ետք ընթրիք պիտի սպասարկուի, եւ ապա երեկոյեան ժամը 7.30ին մասնաւոր պաշտամունք պիտի կատարուի Եկեղեցւոյ մէջ: Յաւարտ պաշտամունքի՝ մշակութային սրահին մէջ պիտի զործադրուի յայտագիր մը, մասնակցութեամբ Հայ Դպրոցի աշակերտներուն եւ դաշնակահար Սթիւ Աբրահամեանի:

Կը թելադրենք որ անհրաժեշտ կարգադրութիւնը ընէք ձեր մասնակցութիւնը քերելու Հայց. Եկեղեցւոյ հոգեւորականներու յատուկ այս տօնին առթիւ կազմակերպուած հաւաքոյթին:

Հաճեցէք ձեր մասնակցութեան մասին տեղեկացնել Տ. Բարի Քհնյ. Մէթճեանի մինչեւ Փետրուար 3, 1988: Տէր Հօր հասցէն եւ հեռաձայնի թիւ կը գտնէք ստորեւ:

The Reverend Father Patee Metjian
Pastor, St. Leon Armenian Church
12-61 Saddle River Road
Fair Lawn, New Jersey 07410
Tel: 201-791-2862

Սիրոյ ողջունիւ
Pate Metjian
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 519

Վիճակիս Հոգեւոր Հովիւներուն

Այս տարի Սրբոց Ղեւոնդեանց Տօնը կը զուգադիպի Փետրուար 16ին՝ Երեքշաբթի օր:

Այս առթիւ մեր թեմի հոգեւորական եղբայրները կը հրաւիրենք միատեղ խորհրդակցութեան, աղօթքի եւ տօնախմբութեան՝ ֆէրլոն նիւ ճրրգի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ մէջ:

Հիւրընկալ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժշ. Տ. Բարի Քհնյ. Մէթճեան կատարած է անհրաժեշտ կարգադրութիւնները:

Հոգեւորականաց խորհրդակցութիւնը տեղի պիտի ունենայ յետ միջօրէի ժամը 3.00ին: Նկատի պիտի առնուին գլխաւորաբար հետեւեալ երկու հարցերը. 1.- Մեր թեմին համար հոգեւորականներ ապահովելու հարց, զոր պիտի ներկայացնէ Բրշ. Միքայէլ Արկ. Չեւեան եւ 2.- Անհովիւ Եկեղեցիներու հարց:

Հոգեւորականաց խորհրդակցութենէն ետք ընթրիք պիտի սպասարկուի, եւ ապա երեկոյեա ժամը 7.30ին մասնաւոր պաշտամունք պիտի կատարուի Եկեղեցւոյ մէջ: Յաւարտ Պաշտամունքի՝ մշակութային սրահին մէջ պիտի գործադրուի յայտագիր մը, մասնակցութեամբ Հայ եւ Կիրակնօրեայ վարժարաններու աշակերտներուն:

Կը թելադրենք որ անհրաժեշտ կարգադրութիւնը ընէք ձեր մասնակցութիւնը բերելու Հայց. Եկեղեցւոյ հոգեւորականներու յատուկ այս տօնին առիթով կազմակերպուած հաւաքոյթին:

Հաճեցէք ձեր մասնակցութեան մասին տեղեկացնել Տ. Բարի Քհնյ. Մէթճեանի, որուն հասցէն եւ հեռաձայնի թիւը կը գտնէք ստորեւ:

Սիրոյ ողջունիկ
Բորիս Գոմար
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Յունուար 22, 1982